Ոչ թէ հրոսպարումներ կամ առանձին անհատներ, այլ պետութիւն մը կ'որոշէ բնաջնջել ժողովուրդ մը: Ու կը սկսի գործադրել այնպիսի ծրագիր մը, որուն համար միայն կարծես ստեղծուած ըլլար «դո՞խային» անվանը: Կ'որոշեն կատարել բացումը ցեղասպանութեան՝ մէկ անգամէն բնաջնջելով հայ մտաւորական խաւը, - բանաստեղծներ, գիտնականներ, լրագրողներ, արձանագործներ, պատմաբաններ, կղերականներ: Ըստ այդ յանցագործ պետութեան հայեցողութեան, դիրքին գործ մը կը թուր բնաջնջել հայ ազգի բոլոր գաւակները, առանց որ բարձրանայ ուսուցողական գործողութիւնը մը ձայնը, որովհետեւ ստեղծագործողներն ձայնն է միայն, որ կը լսուի բարձրաձայն եւ որ սարսփազդու է:

Եւ կրկնուեցան ջարդերը, միայն իր սպանուածներուն թիւը բարձրացաւ մէկուկէ միւսին: Թիւ մը, որուն մտանք չէ արձանագրուած ջարդերու պատմութեան մէջ, որ բարբարոսութեան ալ պատկանի անկալ:

Երեւակայել, որ այդ մէկուկէ միւսին անհատականներն մէջ կը գտնուէին 300 հազար զինուորներ, զինուորագրուած թրքական բանակին մէջ: Ի՛նչ... երեւակայել, որ պետութեան մը բանակին մէջ գոյութիւն ունենայ 300 հազար զինուոր իբրեւ բանակ եւ յիշեալ պետութեան մտքին մէջ յաճախ դաւաճանել այն ազգին, որուն գաւակներն են այդ զինուորները:

Յիրախ խիղճը չորցաւ Թուրքիոյ մէջ այն օրը, երբ իթթիհատական Թուրքիան որոշեց բնաջնջել հայերը: Եւ քիչ կը մնայ, որ յայտարարեմ, թէ այսօր եւս գրեթէ չորցած է մարդկութեան խիղճը, որովհետեւ մարդկութիւնը, այսինքն՝ միջազգային հանրային կարծիքը ցարդ չդատապարտեց ջարդարարը, եւ ջարդարարներն պետութեան ժառանգորդներուն չպարտադրեց հատուցում կատարել, ըսել կ'ուզեմ՝ նիւթաբարոյական հատուցում:

Եւ Ապրիլ 24ի ջարդէն ետք, հայ մտաւորականներն հաւաքական սպանդէն յետոյ, որուն յաջորդեցին զանգուածային միւս ջարդերը, տրամաբանական պիտի ըլլար սպասել, որ անդամալուծութեան դատապարտուէին հայ ժողովուրդի գոյատեւման բոլոր կարողութիւնները:

Այո՛, ասիկա պատահեցաւ բոլոր ջարդուածներուն՝ բացի հայերէն:

Մեռան, կրնաք ըսել՝ մեռան բոլորը: Եւ ահաւախկ, անոնք մեռած են:

Լիբանանէն, անմահ ժողովուրդի այս հայրենիքէն թող փառաբանի բարձրաձայն փառքը Հայաստանին, փառքը այն ժողովուրդի հայրենիքին, որ մեռնի չի գիտեր...:

ՍԱՅԻՏ ԱԳԼ

(1975)



ԵՐԿՐԻ ԵՒ ԵՐԿՆՔԻ ԱՊՄԱՐՈՒԹԻՒՆԸ

Մենք լիբանանահայերուն հետ կը միանանք հայրենիքի ճակատագրին շուրջ, այս տառապալի վաթսուամեակի յիշատակին գծով մենք մեզ կը գտնենք մէկ սիրտ իրենց հետ: Անոնց վրայ գործադրուած

գոլումները եղան վերջինը Համաշխարհային Առաջին պատերազմի ընթացքին: Ջուլումներ՝ որոնց հազուադէպ է, որ ժողովուրդ մը ենթարկուած ըլլայ պատմութեան մէջ, ու ստիկա պարզապէս անոր համար, որ ինք կտրի ստեղծագործող մըն է, սահմանաւած ծլարձակելու երկրամասի մը վրայ, որուն նուաճման համար կը պայքարի իր դրացիներուն ազահութիւնները եւ կրօնական ու աշխարհիկ քսմահանջները:

Եւ ի՞նչ ըսել այս ժողովուրդին, որուն գաւակներուն մէկ հատուածը սիրայօժար ու բաց սրտով ընդունուեցաւ մեր մէջ, եւ մենք փոխադարձաբար լայնօրէն օգտուեցանք իրենցմէ: Տարբեր մարդերու մէջ կատարած գործունէութեամբ անոնք որքա՛ն հարրատաքնուեցին մեր կենքը, կերտեցին, կառուցեցին, ստեղծագործեցին մեր Լիբանանը որդեգրեցին իբրեւ երկրորդ հայրենիք եւ Լիբանանի պատկերով ներազեցին իրենց մայր հայրենիքը, որուն վերադառնալու համար կը պայքարին:

Վերադա՞րձ:

Այո՛:

Չկայ աղէտ մը աւելի սաստիկ, քան արմատախրուութեան, օտարութեան եւ կարօտախտի դժբախտութիւնը: Մենք Լիբանանի մէջ ապաստան ենք հայերու ապրած այն աղէտին սաստիկութեան անմոռոյ այլ աղէտի մը, որուն ենթակա է պաղեստինցի ժողովուրդը՝ մեր մէջ եւ մեր շուրջը: Եւ ինչպէս Պաղեստինը կը պահանջենք պաղեստինցիներուն համար, այնպէս ալ Հայաստանը կը պահանջենք հայերուն համար:

Եւ ասոր մէջ է երկրի եւ երկրի արդարութիւնը:

Եւ երկրի եւ երկրի արդարութեան հնարաւոր չէ խոյս տալ, եթէ նոյնիսկ ուշանայ այդ արդարութիւնը:

Եւ եթէ այս խօսքը ծանօթ է ի յառաջագունէ, այստեղանդեմ, անհրաժեշտ է կրկնուի, որպէսզի մեր մէջ վերածնի յոյսը, հաւատքը եւ զոհաբերութիւնը:

Եւ առանց յոյսի, հաւատքի ու զոհաբերութեան, արդարութիւնը, նոյնիսկ երկրի արդարութիւնը կը մնայ չմարմնաւորող բառ մը:

ԵՌՆՍԷՅ ԷԼ ԽԱԼ

ՄԵՆՔ ՀԱՅԵՐԻՆ ՍՈՐՎԵՑԱՆՔ...

Կենդանի ժողովուրդը նման է ցորենի հատիկին, որուն մասին խօսեցաւ Յիսուս:

Որքան ալ աշխարհը դաւաճան է կենդանի ժողովուրդին, ան չի դաւաճաներ կենսաբանը: Եւ կենսաբան ալ, իր կարգին՝ իրեն:



Կ ու թ ի լ ը ը անոր հոգիէն: Հայերը մեծ պի սորվեցուցին եւրոպացիները: Եւ սորվեցուցին մեծ պի, թէ ինչպէ՛ս վեհանճնութիւնն ու համեմատութիւնը կը միաձուլուին եւ այդ երկու առաքինութիւններուն ամուսնութենէն կը ծնի բարիքը:

Եւ մեծ պի սորվեցուցին նաեւ, որ աշխարհը հսկայ ոճիւր մըն է, սակայն լինելութեան կամքը, այդ տարօրինակ ծաղիկը, որուն գոյութիւնը կ'երաշխարհէ Սասուն, աւելի՛ Վորսուր է նոյնիսկ աշխարհէն:

ՈՒՆՍԻ ԷԼ-ՀԱԺ

(1975)

ՊԻՏԻ ԲԱՐՉՐԱՅՆԵՆ ԴՐՕՇԱԿՆԵՐԸ ԱՊԱԳԱՅԻՆ



Ուղիղ վաթսու տարիներ առաջ, թուրք բարբարոսներուն ձեռամբ մահատակուած հայ մեծ ժողովուրդի մէկուկէ միւսին անհատականներուն կարմիր յիշատակը, յիշատակը գերուած ժողովուրդներուն, որոնք մերժեցին կապանքներն ու գաղութարարութիւնը եւ իբրեւ գին իրենց արիւնը վճարեցին:

Եթէ հայ ժողովուրդը այս դարու առաջին տասնամեակներուն դիմակայեց ցեղամոլութեան ճնշումը առանց ցեղասպանութեան ամէնէն քստմեղի արարքները եւ ենթարկուեցաւ գոլումի ու բռնութեան ծայրագոյն գործողութիւններուն, բռնի արմատախրուած եւ տեղահանման, որոնց հետեւեցրով սփռուեցաւ աշխարհի չորս ծագերուն՝ հեռու իր հողէն եւ հայրենիքէն:

Այսուհանդերձ, այս ժողովուրդին հարցը չի կրնար անջատուիլ մեր հարցերէն... այո՛, անկախ մէկ է... Հայ ժողովուրդը ցեղասպանութեան ամէնէն քստմեղի միջոցներով բնաջնջել փորձող նոյն այդ թուրքերը, ճի՛շդ նոյն ձեւով, օսմանեան սարսփազդու գաղութարարութեան երկար ժամանակաշրջանին գործողութեան գոլումներով, բռնութիւններով, սպանդներով եւ ջարդերով, փորձեցին այնպիսի լիբանանցի ժողովուրդն ու լիբանանեան հողը:

Եւ ճիշդ այսպէս, իսրայել, բռնաբարել ետք Պաղեստինը եւ բռնագաղթի ճամբով տեղահանել եւ գաւազան երկիրներու մէջ տարտղանել յետոյ պաղեստինցի ժողովուրդը, փորձեց եւ երեսու տարիներ է վեր կը փորձէ բռնաբարել արաբական հո-

ղերն ու Լիբանանը: Պատմութիւնը որքա՛ն յար եւ անան է ինքզինքին: Այսօր, երբ ցեղամոլ այս նոր պետութեան միջոցով կը կրկնէ ինքզինքը, կը ձեւաւորուի այն դիմագիծը, որ յար եւ անան է թուրքերու կողմէ հայ ժողովուրդի վրայ ի գործ դրուած ցեղամոլութեան՝ պատերազմի պարագային:

Սակայն ազատներուն արեւը աւելի զօրաւոր է: Սակայն մեծ ժողովուրդներուն կամքը աւելի ամրակուտ է, սակայն այն կաթիլ մը արիւնը, որ ծորեցաւ հայ նահատակներէն՝ պիտի ծագի ազատներու երկինքին մէջ:

Սակայն բարը, որ լուցուեցաւ թուրք ցեղամոլութեան կողմէ, պիտի բարձրանայ իրաքանչիւր հայրենիքի մէջ, որ կը հաւատայ ազատութեան եւ ազատութեան ասպետներուն:

Սակայն սլացիկ հասակները, որոնք փշրուեցան ցեղագութեան սուրբերուն կողմէ, իրենց նորապաշտ բարձրացումով՝ պիտի լեցնեն աշխարհի բոլոր անտառները:

Եւ աչքերը, որոնք մարեցան, պիտի բողբոջին աշխարհի անդատաններուն մէջ:

Իր անհատականներուն համար հոսած հայուն արցունքը ան՛է արաբից արցունքն է, անկախ վիթեմամբից արցունքն է:

Անկախ արցունքն է այն բոլոր անձերուն, որոնք կախաղան հանուեցան ի խնդիր հայրենիքին եւ ազատութեան:

Անկախ արցունքն է պայքարի եւ ապագային հաւատացող իրաքանչիւր հաւատացելի:

Արցունքներն են՝ որոնք պիտի վերածուին հուրերու եւ կապարի, Արցունքներն են՝ որոնք պիտի կերտեն հայրենիքն ու հողը:

Արցունքներն են՝ որոնք պիտի բարձրացնեն դրօշակները ապագային:

ՓՕԼ ՇԱԽՈՒԼ

(1975)

We Give Services. Not Just Policies.

ԱՖՏԻԼ AFHIL

ԱՖՏԻԼ ԵՒ ԱՖԻԼ, Բ. Յարկ, 760. Եւ Յախ. (01) 262231 242556 242557
Imm. AFED, 24me étage, Tél. and Fax: (01) 262231 - 242556 - 242557

FOR THE SAKE OF OUR HEALTH AND YOURS DON'T SMOKE

FOR THE SAKE OF OUR NERVES AND YOURS KEEP SILENT

WATCH OUT! BABY ON BOARD

U.S.S.M. AFHIL

EVEN THOUGH YOU'RE INSURED DRIVE SAFELY

U.S.S.M. AFHIL

ՏԵՂԵԿԱՏՈՒԿԱԿԱՆ ԱՐՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ


ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



«ՀԷՔԸՐ»ՆԵՐՈՒ ԸՆԴՅԱՏԱԿԵԱՅ ԿԱՅՔԵՐԷՆ ՆԵՐՍ



Ընդհանրապես պատանիներ են անոնք. չեն ուզեր «հարեկիչ» նկատուիլ, որովհետև համոզված են թե կը պայքարեն համակարգչային տեղեկությունները բոլորին հասանելի դարձնելու դատին համար. ըստ իրենց, բոլոր համակարգիչներուն ընդգրկած նիւթերէն պէտք է օգտուի հանրութիւնը: Անոնք սովորական մահկանացուներու կողմէ կոչուած են «հէքքըներ»:


«Հէքքըներու ընդատակեայ աշխարհը եւս կը հետեւի ընտելեան օրէնքներուն: Այնտեղ գոյութիւն ունին վատ «հէքքըներ», զորս պէտք չէ շփոթել «բարոյական ուղեկիչներ» ունեցող «հէքքըներ» հետ: Վատ «հէքքըները կը կոչուին «քրէքքըներ կամ պարզապէս՝ «համակարգչային գող»ներ, որոնք համակարգչային դրուածքներ կ'ստանան անոնց վնաս հասցնելու կամ ապօրինի կերպով նիւթական շահեր ապահովելու համար:

Յամենայնդէպս, նման՝ գաղտնի գործող բոլոր անհատներուն «հէքքըներն ու «քրէքքըներն եւս յաճախ դժուար է գտնորոշել: Ստորեւ տրուած կայքերը հետաքրքրուողներուն առիթը կու տան գէթ քանի մը վարկեանի համար մուտք գործելու «հէքքըներու ընդատակեայ աշխարհէն ներս, ուր տեղեկութեան փոխանակումը ոչ մէկ կաշկանդում ունի եւ ոչ մէկ համակարգիչ ապահով է...»

- www.hackers.com
- www.elfrin.com
- www.astalavista.com

ՆԵՆԳՈՒԹԻՒՆՆԵՐ «ԲԱՑԱՅԱՅՏՈՂ»

ԿԱՅՔԵՐ՝ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ



«Քոնսպիրաի Թիւրի» հասկացողութիւնը միշտ ալ ունեցած է իր անբնական հետեւորդները, որոնք քաղաքական եւ ընկերային ցանկացած երեւոյթի ետին դաւեր, սաղրանքներ եւ «մուծ ուժեր» ու մեղսակցութիւն կամ պատասխանատուութիւն կը բացատրեն: «Քոնսպիրաի Թիւրի»ները կը նկատեն բեմադրութիւններ, որոնց կարելի չէ հաւատալ, եւ ճշմարտութիւնը բացատրելու համար հարկ է «աչք նետել» քուլիսներու ետին:

- www.darkconspiracy.com
- www.conspiracyplanet.com
- www.mt.net/watcher
- www.whatreallyhappened.com
- www.davidicke.com

ՀԱՄԱԿԱՐԳԻՉԻ ԱՆՎՃԱՐ ԴԱՍԵՆԹԱՅՔ ԱՉԳ. ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՖԻԱ ՅԱԿՈՒԲԵԱՆ ՔՈԼԵՃ

Ազգային Լեւոն Եւ Սոֆիա Յակոբեան քոլեճը Երևանի հաստատուած համակարգիչի անվճար դասընթացի հինգերորդ հանգրուանը, Գալուստ Կիլիպեկեան Կամակարգիչի կեդրոնէն Երևան, կը սկսի Երկուշաբթի, 15 Ապրիլ 2002ին:

Երեք ամակարգիչներու վրայ բաժնուած դասընթացները տեղի կ'ունենան Երկուշաբթի, 8 Ապրիլ 2002էն Ուրբաթ, 12 Ապրիլ 2002, ամեն օր, առաւօտեան ժամը 9:00էն 3:00:


ՀԱՅ ԴԱՏ ԵՒ ՀԱՄԱՑԱՆՑ

«ՑԵՂԱՍՊՊԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ»


«Տը ձենոսայտ Ֆէքթըր» խորագրեալ պատկերասփիւռի համար պատրաստուած վաւերագրական ժապաւէն մը Ապրիլ ամիսէն սկսեալ պիտի սփռուի Միացեալ Նահանգներու պատկերասփիւռի բազմաթիւ կայաններէն:

4 ժամ տեւողութեամբ այս ժապաւէնը ցարդ շահած է 2002ի Հիւնուարի Միջազգային Ֆիլմի Փառատօնին եւ «Փրիզմ» հիմնարկի վաւերագրական ժապաւէններու մրցանակները:

www.genocidefactor.com
www.genocidefactor.com
www.genocidefactor.com



Վերջին «Կլենտէյլ Բոմբոյնի» (1995) եւ Նիւ-Յորքի Վարդանանի («Քոնսպիրաի» համայնականութեան քրէքքըներու) վերապրողներու



րուն եւ վերապրողներուն», մանրամասն տեղեկութիւններ կը փոխանցէ վաւերագրական այս ժապաւէնին պատրաստութեան մասին:

Կայքին «Ենթահող» բաժնին մէջ, մարդկային պատմութեան մէջ ցեղասպանութեան արհաւիրքի հակիրճ կերպով անդրադառնալէ ետք, կայքը պատրաստողները կը գրեն «Ակադեմիական» մասնագէտներու եւ վերապրողներու օգնութեամբ «Տը ձենոսայտ Ֆէքթըր» կը քննէ ցեղասպանութեան սահմանումն ու անոր բարդ ուղղութիւնները՝ ուսումնասիրելով անոր պատմութիւնը, ներկայ իրավիճակը եւ խոկալով անոր ապագային մասին:

Վաւերագրական ժապաւէնին մէջ խօսք առնող մասնագէտներու կարգին են հայ փրոֆէսօրներ՝ Ռուբէն Ատալիան («Արմինիան Նէշնըլ Ինսթիթիւթ»ի տնօրէն), Ռիչարտ Յովհաննէսեան («ԵՆՍ. ՍԻ. ԷՍ. ԷՍ» համայնական), Լեւոն Մա-

րազիւնի («Կլենտէյլ Բոմբոյնի» (1995) եւ Նիւ-Յորքի Վարդանանի («Քոնսպիրաի» համայնականութեան քրէքքըներու) վերապրողներու ներ փոխանցուած են վաւերագրական ժապաւէնի արտադրիչներուն հեղինակներուն եւ բեմադրիչին մասին: Ժապաւէնին օգնական - արտադրիչն ու հեղինակն է փրոֆ. Մանուկ Մանուկեան, որ Մեքսիկոյի համալսարանի շրջանաւարտ է եւ Հարաւային Ճորտիայի համալսարանի մէջ թուաբանութիւն կը դասախօսէ: Փրոֆ. Մ. Մանուկեան հեղինակն է ցեղասպանութեան մասին շարք մը ուսումնասիրութիւններու եւ այժմ կը պատրաստէ ցեղասպանութեան դասաւանդումի կրթական ծրագիր մը՝ դպրոցներու եւ քոլեճներու աշակերտներուն համար:

Փրոֆ. Մանուկեան գլխավորած է հրթիռներու արձակման գիտական զանազան փորձարկումներ:

Նշենք, որ Ֆիլմին արտադրիչ Ռոպերթ Ճէմըրիի եւ հեղինակ փրոֆ. Ճէք Սէնտրլըի կենսագրականները տեղ գտած են կայքին «Քրեթիթ» բաժնին մէջ:

Կայքը ունի նաեւ «Կայք» բաժնի մը, ուր ներկայացուած են Հայկական Ցեղասպանութեան նուիրուած կայքերու հասցէներ:

ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՏԻ. ՎԻ. ՏԻ.»ՆԵՐՈՒ ՆՈՐԱԳՈՅՆ ՄԵՐՈՒՆԴԸ

Վերջերս հրատարակուեցաւ «Տի. Վի. Տի.» ներու նորագոյն տեսակ մը, որ այժմ շուկայի վրայ գտնուող «Տի. Վի. Տի.» ներէն շուրջ վեց անգամ աւելի տեղեկութիւն կը նայ ամբարել:

Այս նոր գրութիւնը, որ կը կոչուի «պլուրէյ տիւր», կրնայ ամբարել 13 ժամ տեւողութեամբ ֆիլմեր, մինչ այժմու «Տի. Վի. Տի.» ները առաւելագոյն 2 ժամ եւ տարբեր վարկեան տեւողութեամբ ֆիլմ կ'ամբարեն:

Այս նոր սկաւառակներուն մէջ յաւելեալ տեղեկութիւն կարելի է ամփոփել կարմիր փոխարէն կապոյտ լազերային ճառագայթներու օգտագործումին շնորհիւ:

Այս նորագոյն սկաւառակը պատրաստողները, որոնց շարքին են արհեստագիտութեան աշխարհի հսկաներ՝ Մամուտեան, «Ճիւրիս», «Փայոնիր» եւ «Սոնի», կը յուսան, որ շուտով նման «Տի. Վի. Տի.» ներ կարգացող սարքեր պատրաստուին, որպէսզի աւանդական «Տի. Վի. Տի.» ները փոխարինուին «պլուրէյ տիւր»երով:

ՆՈՐ ԾՐԱԳԻՐՆԵՐ

«ՄԱՔՐՈՄԻՏԻԱ ՖԼԷՇ ԷՄ. ԷՔՍ.»

Համակարգչային ծրագրիչներու արտադրութեան մեծագոյն ընկերութիւններէն «Մաքրոմիտիա» հսկայական կարելիութիւններու դուռ բացաւ, երբ հրատարակ իջեց «Ֆլէշ» գրութիւնը, որուն շնորհիւ կարելի է ֆիլմերը յիշեցնող համարակցի կայքեր կամ այլ ծրագրիչներ պատրաստել:


«Ֆլէշ»ի հրատարակման առաջին օրէն մինչեւ օրս ծրագրիչը մեծ խանդավառութեամբ կ'օգտագործուի համացանցի կայքեր ձեւաւորողներուն կողմէ, իսկ աշխարհի համակարգիչներուն 95 առ հարիւրը արդէն օժտուած է «Ֆլէշ» ծրագրիչով կառուցուած համացանցի կայքեր դիտելու կարելիութիւն տուող «Ֆլէշ Փլէյըր»ով:

«Ֆլէշ» ծրագրիչն յաղորդական տարբերակները կարելի է բարեփոխումներ մտցուցին գրութեան մէջ: Յատկապէս «Ֆլէշ 4» եւ «Ֆլէշ 5» ծրագրիչները եկան մեծապէս դիւրացնելու եւ հարստացնելու ձեւաւորումի աշխատանքը: «Ֆլէշ 4»-ը «էքս.» «Ֆլէշ 5»-ի նորագոյն տարբերակը կու գայ աւելի եւս դիւրացնելու աշխատանքը եւ նորանոր կարելիութիւններու առիթը կ'ընձեռէ: Այսպէս, օրինակ, որոշ ձեւաւորումի քեթչիւքներ, զորս կատարելը շարք մը քայլեր կը պահանջէր նախորդ տարբերակներուն մէջ, «Ֆլէշ 4»-ը կատարէ մէկ անգամով: «Ֆլէշ 4»-ը միակ անպատեհութիւնը իր վաճառման սակն է՝ շուրջ 600 տոլար:



ՀԱՄԱՑՆԱԳԻՏԱՐԱՆԱՅԻՆ ԸՆԴԱՐՉԱԿ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՄԱՑԱՆՑԻՆ ՎՐԱՅ

«Օքսֆորտ» համալսարանին հրատարակչատուր, որ մեծ վարկ կը վայելէ բառարաններու եւ համայնագիտարաններու պատրաստութեան բնագաւառին մէջ, վերջերս բացուած կատարեց «Օքսֆորտ Ռեֆըրենս Օնլայն» համացանցի կայքին, որուն մէջ տեղադրուած են «Օքսֆորտ»ի 100 բառարաններու եւ համայնագիտարանային տեղեկութիւններու ընդարձակ հատորները:



Ըստ «Օքսֆորտ» համալսարանի հրատարակչատան պատասխանատուներուն, կայքին մէջ տեղադրուած նիւթերը շատ աւելի ճշգրիտ եւ փաստային են, քան՝ համացանցի շատ մը

կայքերով ներկայացուած տեղեկութիւնները: Ասոր գլխաւոր պատճառը այն է, որ «Օքսֆորտ»ի հատորներուն մէջ ներկայացուած իւրաքանչիւր նիւթ պատրաստուած է ստեւալ բնագաւառի մասնագէտներուն կողմէ:

Կայքին մէջ տեղադրուած նիւթերը տեւաբար պիտի վերաթարմացուին նորանոր տեղեկութիւններով եւ «Օքսֆորտ»ի նորագոյն հրատարակութիւններով:

Կայքը կ'ընդգրկէ «արագ փնտնուող»ի եւ «մասնագիտական փնտնուող»ի գրութիւններ, ինչպէս նաեւ՝ ուղղագրութեան սրբագրութիւն կատարող ծրագիր մը:

Դժբախտաբար կարելի չէ ձրիօրէն օգտուիլ կայքին ընձեռած լայն կարելիութիւններէն: Բաժանորդագրութեան սակը կը սկսի տարեկան շուրջ 200 տոլարէն:

«Օքսֆորտ Ռեֆըրենս Օնլայն»ի հասցէն է՝ www.oxfordreference.com:

ՏԱՐԵՂԱՐՉԻ ԼԱԲՈՐԱՏՆ ՆՈՒԷՐԸ
VIDEO Ի ՎԱՍ CD Ի ՎՐԱՅ
VIDEO CLIPՆԵՐ
ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ ԵՒ ՄԱԿԱՆՈՒՆՈՎ
 Դիմել՝ ԱՐԱ ԲԵԲԵՃԵԱՆ ՀԱՍ.
 Հեռ. 01 / 261696, 03 / 250518

ՏՆՈՐԵՆՈՒԹԻՒՆ

Պատրաստեց՝ Խ. ՍՈՒՐԱՏԵԱՆ

Մանկապատանեկան

ԱՅՐ ՄԱՐԴԻԿՆ ԱԼ ՓԷՇ ԿԸ ՀԱԳՆԻՆ

... Մի՞ խնդաք, փեշ հագնող այր մարդիկ եւս գոյութիւն ունին: Աճուլշտ այր փեշերը աւանդական տարազներ են:



գուստ մը հագնելու: Այս հագուստը շատ նման է հնդիկ կիներու հագուստին:

ԱՆՊԱՍԻՆ ՄԷՋ

Արկուն եւ Սահարա անապատին աւազներուն տոկայլու համար թուարկները վրայ վրայի կը հագնին երկար շապիկներ եւ հագուստներ: Չմոռնանք նաեւ անոնց դէմքը ծածկող քողը: Կ'երեւին միայն անոնց աչքերը, ոտքերը եւ ձեռքերը:



լայն կերպաս մը վրայ վրայի փաթեթի իրենց մարմինն շուրջ:

ԹԱՆԻԹԻՒՄ ՄԷՋ

Այս կղզիին վրայ այր մարդիկը զբօսաշրջիկները կը դիմաւորեն իրենց աւանդական փարէօները հագած:

ԱՓՐԻԿԵԻ ՄԷՋ

Ափրիկեան կարգ մը երկիրներու մէջ օդը շատ խոնաւ է: Այդ խոնաւութեան միակ տոկացող հագուստը յատուկ բոյսի մը թերթէն հիւսուած փէշն է: Մինչ թանգանիոյ եւ Քենիոյ մէջ բնակող Մասայ ցեղախումբերը կը նախընտրեն

ՉԻՆՈՒՐՆԵՐՆ ԱԼ

Հիւսիսային Յունաստանի նախկին լեռնականները անդրադարձած են, որ փէշը շատ «ճկուն» հագուստ մըն է կոխի ժամանակ կամ ժայռե-



րուն մէջէն տեղափոխելու համար:

ԱՆՀԱԻԱՏԱԼԻ


ԿԱՊԻԿ ԳԾԵԼ ԳԻՏԵՕ

Ո՞վ գծած է 110 մեթր երկարութեամբ այս նկարը: Փերուի Նագրա հնդիկները... 2000 տարի առաջ: Անոնք քարերը հանած են գետինը մաքրելու համար եւ գծած են այս կապիկին շրջագիծերը:

Ինչի՞ կը ծառայէր այս գծագրութիւնը: Կը տրուին բազմաթիւ բացատրութիւններ, որովհետեւ ան իր ամբողջութեամբ կը տեսնուի միայն վերէն, կարգ մը անձեր կ'ենթադրեն, որ ան կրնայ գործածուած ըլլալ իրրեւ աստղաբաշխական նկար կամ արտերկրային անջրպետանաւերու համար իջնելու դաշտ: Սակայն ամերիկացի գիտնականներ կ'առաջարկեն աւելի ընդունելի բացատրութիւն մը: Այս գծագրութիւնը եղած է նշան մը ջուրի աղբիւրներու տեղերը ճշդելու համար բան մը, որ անհրաժեշտ էր անապատային անոնց հայրենիքին մէջ:

ՕԳԻՆ ՄԷՋ ԵԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՅ

Մենք միշտ աւելի էլեկտրականութիւն կը սպասենք: Հետեւաբար, ի՞նչպէս աւելին արտադրել առանց բնութիւնը փճացնելու: Ծափոնցիները կը մտածեն լուծումի մը մասին. մինչեւ 2040 անջրպետ զրկել քանի մը քառակուսի քիլոմեթր մեծութեամբ արեւային հայելիներ՝ արեւուն ուժը էլեկտրականութեան վերածելու համար: Այս այս էլեկտրականութիւնը ղէպի երկիր պիտի զրկուի: Թեյերո՞վ...



Ո՞չ, այդ մէկը անկարելի է, որովհետեւ անոնց երկարութիւնը առնուազն 36 հազար քմ. պէտք է ըլլայ: Այս տեղափոխութիւնը պիտի կատարուի մայրքրոս-ուէլլերու միջոցով: Այսինքն պիտի օգտագործուին քլիմային հեռաձայններու եւ փուռերու համար գործածուող ալիքները: Փորձեր պիտի կատարուին բնական էլեկտրականի մը եւ Ռէնոնիոն կղզիին մէկ հեռաւոր գիւղին միջեւ: Այս ձեռնով կրնայ ըլլալ, որ 40 տարի ետք էլեկտրականութիւնը, անձրեւին պէս, երկինքէն իջնէ:

ԾՈՎԱՅԻՆ ԵՐԳԱՎԱՆԳԵՍ

Ի՞նչպէս պաշտպանուիլ որոտող կենդանիի մը դէմ: Քարայիպեան ճերմակ լանկուսթները իւրապատուկ միջոց մը ունին: Անոնք... ջուրով կը նուազեն: Կեղեի փոփոխութեան շրջանին, երբ անոնց կեղեւը տակաւին կակուղ է, եւ դիւրութեամբ կը ճեղքուի որսորդին «ակուսներուն» տակ, անոնք իրենց շոշափուկները կը քսեն իրենց աչքերուն տակ գետեղուած շատ մանր թերթերու: Այս շարժումը կը յառաջանէ ձայն մը, որ շատ կը նմանի ջուրով թերթերու վրայ աղեղի մը հանած ձայնին, եւ ըստ երեւոյթին, այս ձայնը մեծ վախ կը պատճառէ յարձակողներուն, եւ անոնք անմիջապէս կը փախչին:


ԺԱՄԱՆՅ



Քանի՞ ձուկ կը տեսնես այս պատկերին մէջ:



Կրճա՞ս ձանձնալ այս պատկերին մէջ պահուած վեց կենդանիները:



1-71 կետերը իրարու միացուր, գտնելու համար պահուած պատկերը:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

ՏԱՐՈՐԻՆԱԿ ԱՇԽԱՐՀ

- Գիտէ՞ր, թէ օդին մէջ էլեկտրականութիւն կայ: Ի՞նչպէս: Փոթորիկներու ընթացքին: Իւրաքանչիւր կայծակ կրնայ վառել 100 միլիոն լամբ:
- Ծուէտի մէջ գոյութիւն ունի տարօրինակ թանգարան մը, որ յատկացուած է... հոտած ձուկերու: Հոտած ձուկերը ճաշատեսակ մըն են այս երկրին մէջ: Կան անձեր, որոնք շատ կը սիրեն զանոնք, շատերու համար այլ ահաւոր կը թուին անոնք:
- Անշուշտ շաքար մը կերած եւ շարժապատկերի սրահի մը մէջ: Հետեւաբար գիտես, թէ թուղթին ձայնը շատ տհաճ է: Մասնագէտներ նշմարած են, թէ այս ձայնին պատճառը թուղթին տեսակն է եւ ո՛չ թուղթը բանալուն արագութիւնը: Հետեւաբար նախընտրելի է նման շաքարներու թուղթը արագօրէն բա-
- Գիտէ՞ր, թէ օդին մէջ էլեկտրականութիւն կայ: Ի՞նչպէս: Փոթորիկներու ընթացքին: Իւրաքանչիւր կայծակ կրնայ վառել 100 միլիոն լամբ:
- Ծուէտի մէջ գոյութիւն ունի տարօրինակ թանգարան մը, որ յատկացուած է... հոտած ձուկերու: Հոտած ձուկերը ճաշատեսակ մըն են այս երկրին մէջ: Կան անձեր, որոնք շատ կը սիրեն զանոնք, շատերու համար այլ ահաւոր կը թուին անոնք:
- Անշուշտ շաքար մը կերած եւ շարժապատկերի սրահի մը մէջ: Հետեւաբար գիտես, թէ թուղթին ձայնը շատ տհաճ է: Մասնագէտներ նշմարած են, թէ այս ձայնին պատճառը թուղթին տեսակն է եւ ո՛չ թուղթը բանալուն արագութիւնը: Հետեւաբար նախընտրելի է նման շաքարներու թուղթը արագօրէն բա-

ԾԱԽՈՒ ՇԵՆՔ


● Պուրճ Համուտ, Փոլիկարպոս շրջան, 200 քառ. մետր. երկարականի, բնակելի կառոյց եւ գետնայարկ խանութներ, յարմար գին: Դիմել հեռ. 01-897599:

STUDIO **Lantern**

● Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ

Հեռ. 01-268866
Եւ 03-695399

Ն Ե Ր Կ Է՝



Ներկէ՛ հետեւելով թիւերուն: 1=սել, 2=կանաչ, 3=կարմիր, 4=բաց կապոյտ, 5=գոց կապոյտ, իսկ 0 ներս ձերմակ ձգէ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԱՐԵԳ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԵ՛

«ՀԱՆՃԱՐԻ ԱՆՃԱՐԱԿՆԵՐԸ» Ընտելողութեամբ՝ Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ Թատերագիր եւ բեմադրիչ՝ Վ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Տեղի կ'ունենայ Հիմնադրամ, 11 Ապրիլ երեկոյեան ժամը 8:00ին, Զաքար. 13 Ապրիլ կէսօրը ետք ժամը 4:30ին, եւ Կիրակի, 14 Ապրիլ կէսօրը ետք ժամը 5:00ին, «Յակոբ Տեր Մելքոնեան» թատերասրահին մէջ: Սակ՝ 5000 լ.ն.

ՄԱՆՈՒԿԵԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

ՎԱԶԵ ԵՒ ԹԱՍԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ Համալսարանական Կրթաթոշակ 2002-2003 Տարեշրջան

- 1.- Մանուկեան Բարեսիրական Հիմնարկութեան Վաչէ եւ Թամար Մանուկեան Համալսարանական Կրթաթոշակի յատկացումներու բաժանմունքը՝ 2002-2003 ուսումնական տարեշրջանին համար պիտի յատկացնէ որոշ թիւով կրթաթոշակներ նախկին եւ նոր արժանաւոր ուսանողներու եւ թեկնածուներու:
 - 2.- Հիմնարկութեան ծրագիրը կը վերաբերի միմիայն այն ուսանողներուն, որոնք համալսարանական լրիւ մակարդակ ունեցող ուսումնասիրական հաստատութիւն մը պիտի յաճախեն կանոնաւոր կերպով:
 - 3.- Թեկնածուները պարտին ունենալ ուսումնական բարձր մակարդակ եւ ընդունուած ըլլալ նուազագոյն Sophomore դասարանը՝ ամերիկեան համալսարաններուն մէջ, կամ համապատասխան դասարան մը՝ այլ համալսարաններու պարագային:
 - 4.- Մանուկեան Համալսարանական կրթաթոշակ ստացող բոլոր նախկին ուսանողները, ինչպէս նաեւ նոր թեկնածուները պարտին ներկայանալ հիմնարկութեան գրասենեակը՝ 15 Ապրիլէն 20 Մայիս (բացի Շաբաթ օրերէն), կէսօրուան ժամը 12:00էն մինչեւ կէսօր ետք ժամը 5:00, ստորեւ յիշուած հասցէին, ստանալու համար կրթաթոշակի դիմումնագիրը:
- ԴԱՍԹԵ՛. ԺԷԼ ԷԼ ՏԻՊ ԻՐԱՊԱՐԱԿ, «Մալլա» Սենթըր, 5րդ յարկ, հեռաձայն՝ 04-713532:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԴԱՍԱՍԿՈՍ ՆԵՐՍԷՍ ԴԱՍԱՍԿՈՍ ՉԱԶԱՐԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀԱԼԷՊ ԷՕԺԵՆԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Հալէպի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՄԱՏԹԵՆՍ ՆԻՒՐԲԵԹԼԵԱՆԻ մահուան քառասունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Չալքալի Հայ Կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00ին:

ՀԱԼԷՊ ՍԱԼԲԻ (ՀՈՒՐԻ) ՍՈՒԱԶԵԱՆԻ մահուան քառասունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Հալէպի Ս. Գեորգ եկեղեցոյ մէջ (Նոր Գիւղ), յաւարտ Ս. պատարագի:

ԱՐԱՂԱՍ ՊՉՏԻԿԵԱՆԻ մահուան քառասունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Նոր Սիսի Ս. Սարգիս եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՐՄԷԼՈՒԶԻ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ մահուան քառասունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Ժուհի Ս. Յարութիւն եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՎԻՔՈՐԻԱ ԹԻԹԻՉԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Սայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀԱՄԱԶԱՍՊ ԳԱՅՊԱԼԵԱՆԻ մահուան քառասունըփն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Ժուհի Ս. Յարութիւն եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՄԻՀՐԱՆ ԾԻՇԷՃԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Հայաշէնի Ս. Յովհաննու-Կարապետ եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՂԱԶԱՐՈՍ ԶԷՉԷՃԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Նոր Մարաշի Սրբոց Զառասնից Մանկաց եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԶԱՐՈՒԶԻ ԳԱՐԱԳԱՇԵԱՆԻ մահուան քառասունըփն եւ ՍԻՐԱՐՓԻ ԿԻՒՐԻՒՆԼԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Նոր Ատանա թաղի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՐՄԷԼ ԷՔՄԷՃԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Նոր Ատանա թաղի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՏՈՔԹ. ՎԱՐԴԱՆ ՍԷՖԵՐԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Ս. Նշան Մայր եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՓԱՐԱՄԱԶ ԵՒ ԾԱԲԷ ՏՕՆԻԿ-ԵԱՆներու մահուան Ա. տարելիցին առիթով եւ համայն ՏՕՆԻԿ-ԵԱՆ գերդաստանի մեջեցեայներու յիշատակին, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, Նոր Հաճնոյ Ս. Գեորգ եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանին մէջ օտար դրամա- Գիշերու փակման սակագները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկի	31,50 - 33,50	լ.ն.
Իրաքեան տինար	50,00 - 51,00	լ.ն.
Պահրէյնեան տինար	3990,00 - 4010,00	լ.ն.
Բուէյթեան տինար	4906,42 - 4910,42	լ.ն.
Յորդանանեան տինար	4896,42 - 4950,24	լ.ն.
Ս. Մ. Էմիրութեան տինար	408,43 - 412,42	լ.ն.
Ս. Մ. Էմիրութեան տինար	399,90 - 403,99	լ.ն.
Օմանեան ռիալ	3900,00 - 3930,00	լ.ն.
Քաթարեան ռիալ	412,15 - 416,15	լ.ն.
Եգիպտական կիւն	323,72 - 327,72	լ.ն.
Անգլիական սթերլին	2160,70 - 2164,11	լ.ն.
Չուիցերլանդական ֆրանք	900,35 - 904,52	լ.ն.
Թրքական լիրա	3,62 - 3,64	լ.ն.
Կիպրական փաունտ	2298,25 - 2302,35	լ.ն.
Ճապոնական հապար եէն	11,60 - 11,64	լ.ն.
Ավստրալական հապար ֆրանք	2450 - 2451	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00	լ.ն.
Քանադական տոլար	944,40 - 948,85	լ.ն.
Աւստրալական տոլար	803,85 - 807,70	լ.ն.
Եւրո	1323,95 - 1327,16	լ.ն.

● ՈՍԿԻ		
Անգլիական մէկ ոսկի	105,000 - 115,000	լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	91,000 - 101,000	լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	80,000 - 90,000	լ.ն.
Մէքսիկական փէտս	474,000 - 498,000	լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	12,300,000 - 12,800,000	լ.ն.
Մէկ օնս ոսկի	300,68 - 304,72	Տ
Մէկ օնս արծաթ	4,61 - 4,65	Տ

● ՍՈՒԿԵՐԻ ԲԱՇՆԵԹՈՒՂԹԵՐ ԳԻՃԻ Ա. ճշդում ԳԻՃԻ Բ. ճշդում

Ա. կարգի	4 4/8	4 4/8
Բ. կարգի	4 7/8	4 7/8

Բաժնետիրութիւն

«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցեն հրատարակման թուականէ անուագ օր մը առաջ, Միւշեի ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 5:00:

ՄԱՀԱԶԳՆԵՐԸ բացատրութիւն եւ: Մահագր կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ԹԷԶԵԱՆԻ վախճանման Գ. տարելիցին առիթով, Ս. եւ անմահ պատարագ պիտի մատուցուի Կիրակի, 14 Ապրիլ 2002, առաւօտեան ժամը 10:00ին: Պիտի պատարագէ՝

ԳԵՐՊ. ՎԱՐԳԱՆ ԵՊՍ. ԱՇԿԱՐԵԱՆ Էշրեֆիի Հայ Կաթողիկէ պատրիարքարանի Ս. Աւետման եկեղեցոյ մէջ:

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

- ☆ **ԽՈՅ** (21 Մարտէն 20 Ապրիլ) Փորձուիւնները պիտի չազդեն ձեզի, մանաւանդ դրամ ծախսելու տեսակէտէն: Դուք պիտի ունենաք իմաստութիւնը ձեր դրամը խնայելու եւ զայն ծախսելու անհրաժեշտութեան պարագային:
- ☆ **ՅՈՒՆ** (21 Ապրիլէն 21 Մայիս) Ամէն կողմէ գնահատանք պիտի ստանաք, պիտի գովեն ձեզ, բայց այդ գովեստները պիտի չազդեն ձեզի: Ձեր համեստութիւնը ինքնին յաղթանակ մը պիտի նկատուի ձեզի համար:
- ☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս) Սրանցիկ վիճակի մէջ էք, աշխատունակ եւ ուրախ. ամէն մարդ պիտի հիանայ ձեզով: Ուրեմն օրը գերազանցօրէն փայլուն է: Մնացէն նոյն տրամադրութեամբ:
- ☆ **ԽԵՅԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս) Եթէ կը փափաքիք բարեկամներու հանդիպիլ, օրը շատ յարմար է: Անոնք պիտի յարգեն ձեզ, եւ ձեր բոլոր խօսքերը պիտի արժանանան գնահատանքի:
- ☆ **ԱՌԻԻԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս) Պիտի հանդիպիք անձի մը, որուն արհեստը կամ աւարեզը շատ պիտի հետաքրքրէ ձեզ, եւ պիտի կարեւոր ձեր ապագային մասին նոր որոշումներ տալ:
- ☆ **ԿՈՅ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Պիտի կարեւոր ձեր շուրջինները համոզել նամբորդելու կամ խմբային աշխատանք մը կատարելու: Ուրեմն օրը պիտի անցնի հանդարտ ու գուռաբ:
- ☆ **ԿԵՐԻՒՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) Նիւթականի գծով պիտի ստանաք լաւ լուր մը, գոր կ'ակնկալէիք երկար ատենէ ի վեր: Պիտի առեք կարծիքը անձի մը, որ ձեզի ուղղութիւն պիտի տայ օրուան հարցը կարգադրելու:
- ☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր) Այս շաբաթավերջին պիտի ունենաք հանդիպում մը սիրելի անձի մը հետ. այս հանդիպումը առիթ պիտի ըլլայ աւելի փոստհուրիւն ունենալու ձեր սիրտին խօսող էակին վրայ:
- ☆ **ԱՂԵՂՆԱԻՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) Ձեր վիճակը շատ լաւ է եւ ունիք բարեկամաստ պայմաններ, բայց հարկ է որ աւելի աւելի շարժուիք եւ գործօն ըլլաք: Մի՛ ծուլանաք:
- ☆ **ԱՅԾԵՂՋԻԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) Պիտի հանդիպիք ձեր ճաշակին ու խառնուածքին յարմարող անձի մը, որուն հետ պիտի ունենաք գլուխ գլխի խօսակցութիւն: Այս հանդիպումը կրնայ ունենայ բարեկամական երկարատեւ կեանք:
- ☆ **ԾՈՎԱՆՈՅԸ** (21 Յունուարէն 19 Փետրուար) Ուրախութիւնը ժամադրուած է այսօր ձեզի հետ, ձեզի մօտիկ անձերու ընկերակցութեամբ: Իւրաքանչիւր անձ պիտի լսէ միւսին կարծիքը, իսկ դուք պիտի սերտացնէք ձեր բարեկամական կապը:
- ☆ **ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ) Երեկոյի մը ընթացքին պիտի ըլլաք սիրուն եւ գրաւիչ, պիտի արժանանաք բոլորին ուշադրութեան: Նոյնիսկ ձեզի անձամբ անձեր պիտի գովեն եւ երկար ատեն յիշեն ձեզ:

ՕՐԱՏԵՏՐ



Panasonic

ԸՆՈՒՏԵՍԻԼ

10:00. - Սապահո	13:00. - Մարտի	14:00. - Եւրոնիւնոյ	17:30. - Կենդանի գծանկար	19:30. - Մանկական	20:00. - Լուրեր	21:00. - Միջին	22:00. - Չէյք	23:00. - Արար
10:00. - Սապահո	13:00. - Մարտի	14:00. - Եւրոնիւնոյ	17:30. - Կենդանի գծանկար	19:30. - Մանկական	20:00. - Լուրեր	21:00. - Միջին	22:00. - Չէյք	23:00. - Արար

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5123 Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ԸՈՐԻՋՈՆԱԿԱՆ											ՈՒՂԱՆԱՅԵԱՆ										
1. Շող, ճառագայթ - Սպասէ:											1. Մովսէս Խորենացի տրուած մակդիր:										
2. Արական անուն - Յարարեբական դերանուն:											2. Դ. դարու Հերետիկոս - Մանողակ:										
3. Տարիք - Հոռոմեական դիցարանի որսորդութեան աստուածուհին:											3. Կրկնուած բաղաձայններ - Քօշ:										
4. Միայնակեաց կրօնաւոր - Ունկնդրել:											4. Արական անուն - Ճերմակ շինանիւթ:										
5. Արամեացիներէ սերած ժողովուրդ - Պարսնոց:											5. Յամառ չորքոտանի - Գառնսիրուկ (Հակ.) - Ժամանակական մակարայ:										
6. Խեղճուկանկ անկողին:											6. Յովտ - Սաճմանուն:										
7. Հայրապետական գաւազան - Յետոյ:											7. Իգական անուն - Հանդէս:										
8. Պարսիկ թագաւոր - Նամանայն տառեր:											8. Յուցական դերանուն:										
9. Կրկնուած բաղաձայններ - Մտացական անուն - Պաշտպանութիւն:											9. Ստոյիկեան փիլիսոփայութեան Հիմնադիրներէն (Հակ.) - Տպագրական 16 էջ:										
10. Երկաթագործ - Արական օտար անուն:											10. Ասիական ծով - Հայաստանի հնազանդութիւն:										

ԹԻԻ 5122

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՏԸ


1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Հ	Ո	Ռ	Ո	Վ	Ե	Լ	Ս	Ի
2	Ս	Ս	Ս	Ի	Ե	Ս	Ս	Ս	Ս
3	Ս	Ս	Ս	Ե	Ս	Ս	Ս	Ս	Ս
4	Ք	Ա	Լ	Կ	Ա	Ր	Ի	Ա	Ս
5	Ն	Ա	Պ	Ա	Տ	Ռ	Ա	Ս	
6	Ի	Ո	Յ	Ա	Տ	Տ	Ռ		
7	Ա	Ղ	Տ	Ք	Ա	Ս	Ո	Ց	
8	Ի	Ա	Ր	Ա	Ս	Ե	Լ	Ս	Վ
9	Ա	Յ	Ր	Ո	Ղ	Ղ	Ա	Ն	Ա
10	Հ	Ի	Ս	Ք	Օ	Ր	Ր	Ա	Ս

(*) Վերոյիշեալ յայտագիրները ենթակա կրնան ըլլալ որոշ փոփոխութիւններու:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՕՐ Հ.Մ.Ը.Մ. - ԱՀՏ

Լիբանանի ֆուտբոլի ֆեդերատիվի կողմից 21րդ հանգրուանի մրցումներուն, այսօր Շաբաթ ժամը 4:00ին, Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ կը հիւրընկալէ Ախոբ (9րդ): Հ.Մ.Ը.Մ., որ կը գրաւէ դասաւորման 13րդ եւ նախավերջին դիրքը, երթին 1 - 0 արդիւնքով պարտութիւն մը կրած էր անկէ:

Հ.Մ.Ը.Մ., որ ցարդ միայն մէկ յաղթանակ արձանագրած է, նոյն այս դաշտին վրայ պարտութեան մատնելով Ալիի Սայտաւի (3 - 2), իր ամէն կարելիին պիտի ընէ արձանագրելու համար եղանակի իր 2րդ յաղթանակը:

Ստորեւ՝ 21րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

ԱՅՍՕՐ	ԺԿՄ	ԴԱՇՏ
Հ.Մ.Ը.Մ. - Ահո	4:00ից	Պ. Համուտ
Շ. Սահէլ - Թ. Սուր	4:45ից	Մ. Աւան
Անսար - Հ.Մ.Մ.	4:45ից	Պէյրուք

ՎԱՂԸ	ԺԿՄ	ԹՐԻՓՈՒԼԻ
Սայամ - Սաժէ	4:00ից	Թրիփոլի
Ահի Սայտա - Պըրժ	4:00ից	Սաֆա
Ռասիճկ - Սաֆա	4:00ից	Պ. Համուտ
Ախա Ալէյ - Նըժմէ	4:45ից	Պէյրուք

ՓԻՆԿ ՓՈՆԿ

ԱՅՍՕՐ ԿԸ ՍԿՍԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԽՄԲԱՅԻՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ

Այսօր Շաբաթ, «Միշէյ Մըր»ի անուան համալիրին մէջ (Նահր էլ Մոթ) կը սկսի Լիբանանի փինկ փունկի խմբային ֆուտբոլի մրցումները, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն աղջկանց վեց եւ տղոց 12 խումբեր:

Աղջկանց մրցումներուն իրենց մասնակցութիւնը կը բերեն՝ Հ.Մ.Ը.Մ. (Լիբանանի ֆուտբոլի Դիմապի, Շանվիլ, ժամուր, Ատապ Ռիատա (Քաֆարչիմա) եւ Ռիալէ ԲէՖ Ռըմմէ): Իսկ տղոց մրցումներուն իրենց մասնակցութիւնը կը բերեն՝ Հ.Մ.Ը.Մ., Շանվիլ, ժամուր, Ալիի Սայտա, Լիբանանի բանակի հաւաքական, Անդրանիկ, Պաուշիէ, Մար Եուսէֆ (Քընէթ Շահուան), Շապապ Պապատա, Ատապ Ռիատա (Քաֆարչիմա) եւ Մոն Լա Սալ:

Աղջկանց կազմը, որուն մաս կը կազմեն Լիպա Պարիկեան (Լիբանանի ֆուտբոլի), Լարա Քէչէպաշեան (Լիբանանի բաժակակիր) եւ Նոէլ Քէչիշեան, այսօր ժամը 4:00ին կը կատարէ իր առաջին մրցումը՝ Ռիալէ ԲէՖ Ռըմմէի դէմ:

Իսկ տղոց կազմը, որուն մաս կը կազմեն՝ Ալֆրէտ Նաժմը - Սարգիսեան, Ռապիկ Շեմեմեան եւ Մըրուան Մըրժի, այսօր պիտի կատարէ երկու մրցում, առաջինը՝ Շապապ Պապատաի դէմ (ժամը 3:00ին), իսկ երկրորդը՝ Մոն Լա Սալի դէմ (ժամը 6:00ին):

Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներէն կը սպասուի քաջալերել Հ.Մ.Ը.Մ.ի երկսեռ խումբերը, որոնք վստահաբար համակիրներու ներկայութեան շատ ատելի լա արդիւնք կրնան արձանագրել:

ԼԵՎԱՍ

ՇԱԲԱԹԱԿԵՐԶԻ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Շաբաթավերջին, Լ. եւ Ս. Յակոբեան Քոլէճի դաշտին վրայ տեղի կ'ունենան Հ.Մ.Ը.Մ.ի ԼԵՎԱՍի պատերազմի մրցումները, որոնք կ'ընթան բաւական հետաքրքրական ձեւով:

Ստորեւ՝ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը.

ՇԱԲԱԹ, 13 ԱՊՐԻԼ

- Ս. Խանամիրեան - Գ. Չաթալպաշեան (Միջակ աղջիկներ) ժամը 12:00ից
- Մերոպեան - Յովակիմեան (Միջակ տղաք) ժամը 1:00ից:
- Սոֆիա Յակոբեան - Մերոպեան (Մեծ աղջիկներ) ժամը 2:00ից
- Մերոպեան - Եղիշէ Մանուկեան (Մեծ տղաք) ժամը 3:00ից
- Ս. Բառասնից Մանկանց - Թորոսեան (Միջակ տղաք) ժամը 4:00ից
- Կ. Բ. Վ. - Հայ Աւետ. Զոլէճ - Այնճար (Մեծ տղաք) ժամը 5:00ից
- Շամլեան Թաթիկեան - Եղիշէ Մանուկեան (Մեծ աղջիկներ) ժամը 6:00ից
- Շամլեան Թաթիկեան - Ճեմարան (Մեծ տղաք) ժամը 7:00ից

ԿԻՐԱԿԻ, 14 ԱՊՐԻԼ

- Դարեվանք - Սրբուհի Ազնէս (Միջակ տղաք) ժամը 3:00ից
- Նուպարեան - Խանամիրեան - Դարեվանք (Մեծ տղաք) ժամը 4:00ից
- Գ. Չաթալպաշեան - Նուպարեան - Խրիմեան (Միջակ աղջիկներ) ժամը 5:00ից
- Ս. Ղուկասիմեան - Ս. Խաչ (Միջակ տղաք) ժամը 6:00ից

ՄՊԱՆԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՌԵԱԼ ՄԱՏՐԻՏ - ՎԱԼԵՆՍԻԱ ՍՈՒՐ ՊԱՅՔԱՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Սպանիոյ ֆուտբոլի ֆեդերատիվի կողմից 34րդ հանգրուանին, նախորդ հանգրուաններուն նման Ռեալ Մատրիտ - Վալենսիա պայքարը դարձեալ պիտի շարունակուի, նկատի ունենալով, որ անոնք երկուքը ունին 62ական կէտ, սակայն մայրաքաղաքի կազմը իր ունեցած կոչվըրէյճին շնորհիւ կը գերազանցէ Վալենսիան:

34րդ հանգրուանի բացման մրցումին, այսօր տեղի կ'ունենայ միայն մէկ մրցում, որուն ընթացքին Վալենսիա հիւրը պիտի ըլլայ Մայորքայի (16րդ):

Յաղթանակի մը կամ հաւասարութեան մը պարագային Վալենսիա առժամաբար պիտի գրաւէ պարագուի դիրքը, սպասելով վաղը տեղի ունե-

նալիք Օսասունա - Ռեալ Մատրիտ մրցումին: Ռեալ Մատրիտ, որ դաշտ պիտի ներկայանայ առանց Ռոպերթո Քարլոսի (կախակալուած), իր կատարած վերջին եօթ մրցումներուն պարտութիւն չէ կրած, (17րդ) իր կատարած վերջին 24 մրցումներուն կրցած է հաւաքել միայն... երեք կէտ:

Ստորեւ՝ 34րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները (ժամերը՝ Պէյրուքի ժամանակացոյցով).

ԱՅՍՕՐ	ԺԿՄ
Մայորքա - Վալենսիա	22:30ից

ՎԱՂԸ	ԺԿՄ
Տեփորթիո Զորուցա - Էսփանիոլ	19:00ից
Ռայո Վալյեքանո - Ռեալ Վալատոլիտ	19:00ից
Ռեալ Սոսիտատ - Մալակա	19:00ից
Սելիլա - Լաս Փալմաս	19:00ից
Թեմերիֆէ - Ռեալ Պեթիս	19:00ից
Վիարեալ - Սելթա Վիկո	19:00ից
Պարսելոնա - Ալաւէս	19:30ից
Ռեալ Սարալոսա - Աթ. Պիլպաս	20:00ից
Օսասունա - Ռեալ Մատրիտ	21:00ից

ՔԱԼԶԻՕ

ԵՈՒՎԵՆԹՈՒՄ - Ա. ՍԷ. ՄԻԼԱՆ՝ ԳԱԳԱԹԻ ԾԱԿԱՏՈՒՄ

Իտալիոյ ֆուտբոլի ֆեդերատիվի կողմից 31րդ հանգրուանի մրցումներուն, որոնք բոլորն ալ տեղի պիտի ունենան վաղը՝ Կիրակի, պարագուի դիրքը գրաւող Ինթեր Միլան «Սան Սիրո»ի մէջ պիտի հիւրընկալէ Պրեշան (14րդ):

Ինթեր, որ այժմ երկու կէտի առաւելութիւն ունի Ա. Էս. Ռոմայի վրայ, ամէն գնով պիտի փորձէ պարտութեան մատնել իր հիւրը, մասնաւորապէս անհկա վերջին երեք մրցումներուն յաղթանակ չէ արձանագրած, իսկ անհկա վերջին անգամ ֆուտբոլի մրցումներուն տիրացած է 1989ին: Նշենք, թէ Ինթերի կազմին թէեւ պիտի բացակայի Քլա-

րենս Սիտորի (կախակալուած), սակայն Ռոմայի վերադարձը որոշ յոյս մը կրնայ ներշնչել իր խմբակիցներուն:

31րդ հանգրուանի զագաթի ձակատուը սակայն տեղի պիտի ունենայ Եովէնթուսի եւ Ա. Սէ. Միլանի միջեւ:

Շաբաթ մը առաջ կը կարծուէր, որ Եովէնթուսի մարտիչ Մարչելո Լիփիի օրերը համարուած են, իսկ միայն արձանագրած ձախող արդիւնքներուն պատճառով, սակայն այժմ անհկա դարձեալ մտած է ֆուտբոլի մրցումներուն պայքարին մէջ, որովհետեւ կը գրաւէ 3րդ դիրքը եւ միայն երեք կէտով ետ կը մնայ Ինթերէն:

Ստորեւ՝ 31րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (անոնք բոլորն ալ տեղի պիտի ունենան վաղը, միեւնոյն ժամուն՝ ժամը 16:00ին, Պէյրուքի ժամանակացոյցով).

Սթալանթա - Թորինո	Պորուսիա - Փիաչենցա
Ֆիորենտինա - Լացիո	Ռոմա - Պրեշիա
Եովէնթուս - Ա. Սէ. Միլան	Լեչէ - Քիեւո Վերոնա
Ա. Էս. Ռոմա - Փարմա	Վենետիա - Փերուճիա
Վերոնա - Ուտինէպէ	

Ա. Էս. Ռոմա, որ պիտի հիւրընկալէ Փարման, ձախողութեան մը պարագային տիրուած պիտի չընտան իր յոյսերը պիտի կորսնցնէ:

Ստորեւ՝ 31րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (անոնք բոլորն ալ տեղի պիտի ունենան վաղը, միեւնոյն ժամուն՝ ժամը 16:00ին, Պէյրուքի ժամանակացոյցով).

Սթալանթա - Թորինո	Պորուսիա - Փիաչենցա
Ֆիորենտինա - Լացիո	Ռոմա - Պրեշիա
Եովէնթուս - Ա. Սէ. Միլան	Լեչէ - Քիեւո Վերոնա
Ա. Էս. Ռոմա - Փարմա	Վենետիա - Փերուճիա
Վերոնա - Ուտինէպէ	

ՊԱՅՔԱՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԶՄԸ ՅԱՂԹԵՑ ՄԻԱՅՆ ԱԶՐՊԵՅՃԱՆԻՆ

Հայաստանի պատանիներու պատերազմի հաւաքականը, Թիֆլիսի մէջ տեղի ունեցած քառանկամ մրցաշարքին գրաւեց 3րդ դիրքը, յաղթելով միայն վերջին դիրքը գրաւող Արարիկեանին:

Մրցաշարքին բաժակին տիրացաւ Յունաստանը, որ յաջողեցաւ պարտութեան մատնել մրցաշարքը հիւրընկալող Վրաստանը, վերջին օրուան մրցումին:

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՄԱՐՍԷՅ - ՓԱՐԻԶ ՄԷՆ ԺԵՐՍԷՆ՝ 1-0

Ֆրանսայի ֆուտբոլի ֆեդերատիվի կողմից 32րդ հանգրուանի բացման մրցումին, երէկ «Վելոպրուս»ի մէջ տեղի ունեցաւ Մարսէյ - Փ. Մ. Մ. զագաթի ձակապումը, որուն ընթացքին Մարսէյ 1-0 արդիւնքով դարձաւ ֆրանսական մարտի մրցումներուն տիրակալը: Մրցումին «որբ» կողմը նշանակեց Տանիէլ Վան Պիլլիքէն (65րդ):

Մարսէյի համար յաղթանակը կամ դարձաւ իրենց ոչինչ կրնայ փոխել յառաջիկայ եղանակին որեւէ մրցաշարքի մը մասնակցելու համար: Բայց իրարու «ոխերիմ թշնամի» երկու այս խումբերուն միջեւ ձակապումը միշտ ալ կը նկատուի ֆուտբոլի մրցումներուն փոփոխութեան համագործընկերը:

Մարսէյ բաւական փորձառու էր արժանացաւ յաղթանակին, մասնաւորապէս որ զգալի էր անոր մօտ դարձաւ իր արժանիքը:

32րդ հանգրուանի մնացեալ բոլոր մրցումները կը կապարտին այսօր:

ԱՅՍՕՐ ԿԸ ՍԿՍԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերատիվի կողմից 12 խումբերու: Նշենք, թէ մրցումներուն մէկ մասը տեղի կ'ունենայ վաղը՝ Կիրակի:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերատիվի նախագահ Սուրէն Աբրահամեան կը յայտնէ, թէ այս եղանակին ֆուտբոլի մրցումները տեղի պիտի ունենան միայն Շաբաթ եւ Կիրակի օրերը: Յառաջիկայ Օգոստոսին, երթի մրցումներուն աւարտով, խումբերը պիտի ունենան իրենց արձակուրդը եւ ֆուտբոլի մրցումները կարճ միջոցի մը համար պիտի ընդմիջուի, ապա պիտի շարունակուի:

Աբրահամեան կ'աւելցնէ, թէ այս եղանակին ֆեդերատիվը առաւելագոյն ձեւով պատրաստուած է ֆուտբոլի մրցումներուն մրցումներուն, հարկ եղած բոլոր կարգադրութիւնները կատարելով եւ անորոշ ոչ մէկ հարց ձգելով:

Այս տարի երոպական մրցաշարքերուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն չորս խումբեր. «Փիւնիկ» պիտի մասնակցի «Չէմփրիպ Լիկ»ի մրցաշարքին, իսկ բաժակակիրը եւ երկու այլ խումբեր՝ Եու. Է. Էֆ. Ա.ի մրցաշարքին:

ՖՈՐՄԱԿԱՆ 1

ՎԱՂԸ՝ ՍԱՆ ՄԱՐԻՆՈՅԻ ԿՐԱՆ ՓՐԻԷ

Վաղը՝ Կիրակի, Սան Մարինոյի մէջ (Ինոլա) տեղի կ'ունենայ Ֆորմաքա Լի աշխարհի ֆուտբոլի մրցումներուն 4րդ կրան փրիւ, որ 62 լէվոնոց շրջափակ մը պիտի ըլլայ: Ընդամենը 305,5 քմ. երկարութիւն ունեցող այս կրան փրիւ կը սկսի ժամը 15:00ին՝ Պէյրուքի ժամանակացոյցով:

Թէեւ փոյ փոյի մրցումները տեղի կ'ունենան այսօր, սակայն երկուսն ոչ պաշտօնական փորձերուն ընթացքին Ֆորմաքաի վարորդ գերմանացի Միքայէլ Շումախը արձանագրեց յաւազոյն արդիւնքը՝ մէկ վայրկեան 37" 486:

Իտալացի ձիաքարտ Ֆիլիպպիա (Ճորտըն), որ այս եղանակին ցարդ ոչ մէկ կէտ կրցած է ապահովել, հանդիսացաւ 2րդ, արձանագրելով մէկ վայրկեան 38" 093 արդիւնք մը:


Անցեալ տարի այս կրան փրիւն ֆուտբոլի հանդիսացած գերմանացի Ռայֆ Շումախըր (Ռիլիքըմա), որ այժմ վարորդներու ընդհանուր դասաւորման մէջ ութ կէտով ետ կը մնայ իր եղբորմէն, հանդիսացաւ 3րդ:

Իսկ անցեալ տարի փոյ փոյի մրցումներուն առաջին դիրքը գրաւած բրիտանացի Տէյվիտ Բուլթարտ (Մաքլարթըն), որ ունի միայն 4 կէտ, հանդիսացաւ 9րդ:

ՃԱՏՐԱԿ

1


ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՌԱՂՍ ԵՒ ՄԱԹ 2 ԾԱՐԺՈՒՄՈՎ



ՎԵՆ Պ. - ՓԵՏՐՍԵՆ Օ. (2002)

2


ՄԵՐԵՐԸ ԿԸ ՌԱՂՍ ԵՒ ՄԱԹ 2 ԾԱՐԺՈՒՄՈՎ



ՏԱԿԻՍԸՐ Թ. - ՍԹԵՅԱՆ Ռ. (2002)

3


ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՌԱՂՍ ԵՒ ՄԱԹ 2 ԾԱՐԺՈՒՄՈՎ



ՄԱՐԹ Փ. - ՍԱՆԹԱՆ Վ. (2002)

4

ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ՌԱՂՍ ԵՒ ՄԱԹ 2 ԾԱՐԺՈՒՄՈՎ



ՏՈՒՆԵԱԸ ԶԼԵՐԸ (2002)

Խնդիրներուն լուծումը տեսնել՝ 10րդ էջ

Այս սիւնակը պատրաստեց՝ Էլի Հուլիշեան

